

Գ. Ա. Ղ. Տ Ն Ի Ք



Տաճարին մէջ, ուր ջահերն առկայծեցան մեղմօրէն
 խունկին ծաւի քողին տակ որ մութին մէջ կը դողայ,
 Բազկատարած, հոգեզմայլ ես առանձին եմ ահա,
 Ու կը սպասեմ քու դարձիդ Հայցումի լուռ ճամբայէն:

Դուն պիտի գաս, և ձայնիդ անհուն կշռոյթը կարծես
 Ներդաշնակած է մարմար սիւներն իրենց արուեստով,
 Դուն մըտերիմ և աստուած, դուն բարեգութ, հոգետեհ,
 Պիտի ժպտիս, հայրական ո՛վ կերպարանք լուսաթով:

Եւ շրթունքիդ բառերէն պիտի ծաղկին երկինքներ,
 Եւ ձեռքերուդ համբոյրէն իմ շրթունքներս պիտի զգան
 Արեւին կրակը վըճիտ, ո՛վ Առաքեալ ոսկեհեր,
 Պատմունանիդ ծալքերուն մէջ պահուեր է լուսընկան:

Թեքեա ինծի պիտի 'սես որ պատրանք է ամէն ինչ,
 Եւ երեւոյթն է միայն տեսիլքը մեր հոգիին,
 Շղթայակապ երազ մ'է կեանքը. հայլի մըն է ջինջ
 Տիեզերքն ուր լուկ ըռպէ մը պատկերները կ'անցնին...

Եւ ես արդէն համակերպ, առանց խօսքի, արցունքով
 Պիտի յայտնեմ իմ սրտիս ուրախութիւնն անսահման,
 Որովհետեւ ծնրադիր՝ պիտի գտնեմ ոտքիդ քով
 Անհուն խորհուրդը կեանքին՝ որ ցոլացումն է մահուան....:

ԱՐՄԵՆ ԻՐԱՅԻՄ

ԱՅԼԵԻԱՅԻՔ

Ա Մ Ո Ւ Ն Տ Ս Ո Ն Կ Ը Պ Ա Տ Մ Է

Իր դէպի անճամօթը սաւառնումը եւ սառոյցներու դէմ ունեցած գերմարդկային մարտը

(Շարունակութիւն տես Բազմավէպ 1925, էջ 278)

ՏԱԳԵԱՊԱՆԻԾ ՎԱՅՐԿԵԱՆԸ

Ռիսըր-Լարսըն և Տիթրիչըն մեկնատե-
 ղին կը սահմանեն, կը սկսինք սառնեղէն
 կոյտերը մէկդի դնելու տաժանելի գործին,
 Յունիս շին ամէն ինչ պատրաստ է. թէպէտ
 օդը բարեխառնութեան մեղմութիւնը սա-
 ոին բեկանելուն դիրութիւն կ'ընծայէր. և
 ստուգիւ փորձն անյաջող կ'երթայ, քանզի
 սաւառնակի ծանրութեան տակ սառը կը

խորտակուի ու ջուրէն դուրս կը ցցուին ա-
 նոր կտորները, Գիշերը զննութեամբ կ'անցը-
 նենք, ժամը մէկին սաւառնակին դէտը Ռի-
 սըր-Լարսընը կը կանչէ, սառոյցը սկսած
 էր դէպի գործիքը յառաջանալ, ամէնքս
 ալ կ'արթնանք ահազին դղրդումէն: Սա-
 րոյցը սաւառնակը սեղմած է և կազմածը
 ճնշման տակ կը ճարճատի ու կը հեծէ,
 և երկաթեայ կողերը տեղիք կու տան:
 Ապահովաբար սաւառնակը կը կորսնն-